ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ (1898–1908 թթ.)

XIX դ. վերջին և XX դ. սկզբին սուլթանական կառավարությունը հովանավորչական քաղաքականություն էր վարում Արևմտյան Հայաստանի մահմեդական բնակչության նկատմամբ: Նա ոչ միայն չէր ոչնչացնում Արևմտյան Հայաստանի բնակչության այդ շերտերին, այլև քաղաքական նկատառումներով ստվարացնում էր դրանք:

Թե ինչ արագությամբ էր բռնակալը առաջ տանում այդ գործը, կարելի է դատել հետևյալ տվյալներից. 1894–1896 թթ. ջարդերից առաջ Աղլ ջնսզի 18 գյուղերում քրդեր բոլորովին չկային: Սակայն 1898 թ. արդեն կային քրդական 108 տնտեսություններ: Համարյա նույն բանը տեղի ունեցավ նաև Արճեշի 20 գյուղերում, ուր քուրդ տնտեսությունների քանակը նշված ժամանակամիջոցում 21–ից բարձրացավ 189–ի[1]: Քրդական տարրը այդպիսի տեմպերով առաջադիմեց նաև Թիմարում, Հայոց Ձորում, Արճակում, Բերկրիում, Կարճկևանում, Մոկսում, Մահմուդիեում, Շատախում, Գավաշում, Բաշկալեում, Մեմուրեթ–յուլ–Համիդիեում, Ալաշկերտում, Սար–սու գավառակում և այլ վայրերում[2]: Ամենուրեք քրդերը նվաճում էին հայերի գյուղերը, հաստատվում նրանց հողերի վրա:

Աղբյուրների և գրականության մեջ քրդերի թվաքանակի մասին կան իրարամերժ տեղեկություններ: Այսպես Ֆ. Գրյագնովը ենթադրում է, որ 1890–ական թվականների կեսերին ամբողջ Թուրքիայում քրդերը կազմում էին 1, 5–2 միլ., որից 1, 5 միլ. բնակվում են ասիական Թուրքիայում, ավելի ճիշտ Էրզրումի, Դիարբեքիրի Բիթլիսի, Խարբերդի, Մոսուլի վիլայեթներում և Սուլեյմանե սանջակում[3]:

Վանի ռուսական վախիցապառոսը նկատում է, որ 1908 թ. Թուրքիայում ապրում էին շուրջ 1, 5 միլ. քուրդ, ընդ որում չի նշում, թե դրա ո՞ր մասն էր բնակվում Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում[4]:

Պ. Ի. Ավերյանովը ցույց էր տալիս, որ 1911 թ. Օսմանյան կայսրության մեջ հաշվվում են 1. 740. 000 քուրդ, որոնք կազմում են

Արևմտյան Հայաստանի բնակչության մոտ կեսը, իսկ մահմեդական բնակչության՝ 2/3–ը[5]: Նույն հեղինակի պնդմամբ, Արևելյան Անատոլիայի որոշ շրջաններում քրդերն ավելի մեծ թիվ են կազմում, հասնելով Բիթլիսի վիլայեթում բնակչության 55%–ի, իսկ Մոսուլի վիլայեթում՝ 64%–ի[6]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով, 1912 թ. հայկական վեց վիլայեթներում ապրում են 678 հազ. քուրդ, որից 242 հազ. նստակյաց, 182 հազ. քոչվոր, 140 հազ. ղըլզըլբաշ, 77 հազ. զազա և 37 հազ. եզդի[7]:

Թուրքական կառավարող շրջանները իասավում էին քրդերի թվաքանակի հրապարակումից, բայց պաշտոնապես հայտարարում էին, որ նրանք հայկական վեց նահանգներում կազմում են մեծամասնություն:

Դժվար չե նկատել, որ այդ հեղինակները քաղաքական նկատառումներով ուռճացնում կամ նվազեցնում էին Արևմտյան Հայաստանի քուրդ ազգաբնակչության թիվը: Ոմանք կարծում էին, որ դրանով կարտամղեն միջազգային դիվանագիտությունից հայկական հարցը, մյուսները ենթադրում էին հակառակը: Իրերի նման պայմաններում Արևմտյան Հայաստանի քրդերի թիվը կարելի է որոշել միմիայն մոտավոր ճշտությամբ: Բերած տվյալներից եթե իրականությանն ավելի մոտ համարենք Պ. Ի. Ավերյանովի տեղեկությունները և դրա հետ միասին նկատի ունենանք, որ քրդերի զգալի զանգվածը տակավին գտնվում էր իր հայրենիքում, այսինքն՝ Մոսուլի վիլայեթում, Դիարբեքիրի, Բիթլիսի ու Վանի նահանգների հարավային վայրերում, ապա կարելի է համաձայնվել, որ Արևմտյան Հայաստանում քրդերի թվաքանակը պետք է տատանվեր 1 միլիոնի սահմաններում: Թերևս հետագայում հետազոտողները կարողանան ավելի ճշտել քրդերի թիվը, անկասկած է սակայն, որ Արևմտյան Հայաստանում նրանք հայերից քիչ էին և կազմում էին երկրի բնակչության երկրորդ խոշոր զանգվածը:

Արևմտյան Հայաստանում քրդերը բնակվում էին գերազանցապես Վանի, Բիթլիսի ու Դիարբեքիրի վիլայեթներում: Այդ նահանգների որոշ շրջաններում նրանք կազմում էին բնակչության նույնիսկ մեծամասնությունը (Հեքյարիի սանջակում, Աբաղայի դաշտում, Խոշաբում, Մոտկանում, Նորդուզում, Վարդոյում, Խնուսում և այլն[8]): Խարբերդի և Էրզրումի վիլայեթներում քրդերի թիվը համեմատաբար քիչ էր, Ավազի վիլայեթներում՝ ավելի քիչ, հասնելով հազիվ 29. 000–ի[9]:

Քրդերի ճնշող մեծամասնությունը ապրում էր գյուղերում, իսկ քաղաքներում՝ խիստ աննշան տոկոսը: Գյուղերում նրանք զբաղվում էին անասնապահությամբ ու երկրագործությամբ, իսկ քաղաքներում՝ պաշտոնավարությամբ, մյուլթեզիմությամբ կամ թահսիլդարությամբ, օրամշակությամբ և այլն:

Քուրդ գյուղացիության կեսից ավելին վարում էր կիսաքոչվորական կյանք և ապրում համարյա բացառապես անասնապահությամբ, իսկ մնացածը՝ զբաղվում էր երկրագործությամբ[10]: Կիսաքոչվորական քրդերը կոչվում էին աշիրեթական, քանզի դեռ պահպանում էին տոհմացեղային կապերը և ունեին որոշ ինքնուրույնություն, իսկ երկրագործ քրդերը՝ ռայաներ: Սրանք արդեն զրկվել էին այդ կապերից և ընկել պետության ու աղաների իշխանության տակ:

Ռայա–քրդերը ցրված էին Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում, մինչդեռ աշիրեթական–քրդերը ապրում էին որոշակի տարածություններում, հանդիսանալով այդ տարածքների փաստացի տերերը: Քրդական որոշ աշիրեթներ բազմամարդ էին, իսկ մյուսները՝ սակավամարդ: Բազմամարդությամբ հատկանշվում էին հատկապես ցեղային միություններով ապրող քրդերը, իսկ սակավամարդությամբ՝ առանձին ցեղերով ու հատկապես համայնքներով ապրողները:

Սուլթան Համիդը թեպետև պաշտպանում էր քրդերին հայերի դեմ, սակայն քրդերի նկատմամբ նույնպես վարում էր շովինիստական քաղաքականություն, ենթարկում ազգային ու սոցիալական ճնշման: Նա թուլացնում էր քրդերի դիմադրական ուժը, երբ պաշտպանում էր նրանց շահագործող վերնախավի շահերը և ոտնահարում աշխատավորական զանգվածների կենսական խնդիրները, չեզոքացնում էր քրդերի միավորման փորձերը, երբ սերմանում էր նրանց առաջնորդների մեջ տևական կռիվներ: Բռնակալը ուղղակի և անուղղակի միջոցներով արգելակում էր քրդերի ազգային գիտակցության զարգացումը և, պահելով կրոնական մակարդակի վրա, ձգտում էր ծուլել նրանց թուրքերի հետ:

Սուլթան Համիդի կառավարությունը քրդական որոշ զանգվածներին ենթարկում էր նաև կրոնական հալածանքների[11]: Նրա հրոսակները հետապնդում էին հատկապես եզդիներին, որոնք լինելով քրդախոս, դավանանքով սակայն մահմեդականներ չէին: Չտանելով թուրքական իշխանությունների բռնությունները, եզդիները վարձում էին հավատափոխվել, սակայն ձգտում էին ընդունել ոչ այնքան իսլամություն, որքան քրիստոնեություն, մասնավորապես ուղղափառություն, կամենալով անցնել Ռուսաստանի հովանավորության տակ: Ուշագրավ է, որ բացի եզդիներից, թուրքական բռնություններից ազատվելու համար դավանափոխության վարձեր էին կատարում նաև քրդական այլ զանգվածներ: Այսպես. 1901 թ. Դերսիմի ղզզլբաշները ներկայացուցիչներ ուղարկեցին Թիֆլիս ու Մուշ, պարզելու համար այստեղի հայերի ուղղափառություն ընդունելու հարցը: Եթե իմանային, որ հայերն արդեն դարձել են ուղղափառներ, ապա իրենք ևս պետք է հետևեին նրանց օրինակին: Քրդական որոշ զանգվածներ այդպիսի դիրք էին բռնել նաև Վանի վիլայեթում: Ռուսական վախիյուպատոս Ա. Թումանսկին, անդրադառնալով քրդերի

այդ տրամադրություններին, 1901 թ. նոյեմբերի 27–ին գրում էր. «Իրերի վիճակն այդպիսին է նաև Վանի վիլայեթում, որտեղ քրդերը սպասում են իմ վերադարձին, որ տան նման խնդրագրեր»[12]:

***

Սուլթան Համիդը քրդերից զատ Արևմտյան Հայաստանը ձգտում էր բնակեցնել նաև թուրքերով: Չգտնելով ուրիշ հնարավորություն, նա զարկ տվեց Բալկանների արտամղված թուրքերի և ցարիզմից դժգոհ Անդրկովկասի մահմեդականների տեղափոխումներին դեպի իր կայսրության արևելյան մասերը: Այդ եկվորները, որոնք հայտնի էին մուհաջիրներ (գաղթականներ) անունով, հաստատվում էին Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում: Դեռ 1895 թ. սեպտեմբերի 2–ին «Մշակ» –ը գրում էր. «Բալկան գաղթականները շրջապատեցին Անատոլիայի հայ գյուղերը և մասամբ անցան դեպի Խարբերդ և Դիարբեքիր: Աջառստանի, Արդահանի և Ճորոխի ափերի մուսուլմանները և Կաղզվանի քրդերն ու թուրքերը շրջապատեցին Ալաշկերտի, Բասենի, Բայազետի, Մանազկերտի հայերին և մյուս մասը մնաց Թորթումի, Նարիմանի, Քիսքիմի և Տրապիզոնի կողմերում: Իսկ Կարսի նահանգի մոլեռանդ մուսուլմանները բնակվեցին գլխավորապես քաղաքներում, օրինակ՝ Սեբաստիա, Խարբերդ, Էրզրում և Երզնկա, իսկ փոքրամասնությունը ցրվեց այդ քաղաքների մոտակա գյուղերում»[13]:

Իշխանությունները եկվորներին բնակեցնում էին ոչ միայն փախած ու տարագրված, այլև տակավին իրենց գյուղերում ապրող հայերի հողերում և այդպիսով առաջին իսկ օրից ստեղծում թշնամական հարաբերություններ մուհաջիրների ու տեղացիների միջև: Հետագա տարիներին սուլթանի սատրապները մուհաջիրների հոսքը դեպի Արևմտյան Հայաստան ավելի ուժեղացրին: Միայն 1900 թ. այստեղ բերեցին Ռուսաստանից, ավելի ճիշտ՝ Կովկասից 7000 հոգի, իսկ Բալկաններից՝ Բոսնիայից ու Ռումինիայից՝ 895 ընտանիք[14]:

Կառավարության վարած քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում նկատելի արագությամբ մեծացավ թուրք բնակչության թիվը: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը նշում էր, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայկական վեց վիլայեթներում ապրում էր 666. 000 թուրք[15], իսկ Պ. Ի. Ավերյանովը այդ թիվը հասցնում էր մինչև 888. 000–ի, երբ գրում էր, թե հայկական վիլայեթներում 1911 թ. հաշվվում էր 3. 552. 000 մարդ, որի 1/4–ը թուրքեր են[16]: Չնայած դրան, Արևմտյան Հայաստանում իրենց քանակով թուրքերը կազմում էին ազգաբնակչության երրորդ խոշոր զանգվածը: Երկրի որոշ շրջաններում նրանք հանդիսանում էին բնակչության մեծամասնությունը (Սվազի վիլայեթում, Էրզրումի, Երզնկայի, Դերջանի, Բաբերդի և այլ գավառներում[17]), իսկ այլ շրջաններում՝ վաքրամասնությունը (Բիթլիսի,

Դիարբեքիրի վիլայեթներում, Վանի վիլայեթի մի շարք վայրերում[18]): Թուրքերի հիմնական զանգվածը հաստատված էր կայսրության այլ շրջաններում, գլխավորապես կենտրոնական ու արևմտյան Անատոլիայում: Բավական է նշել, որ Ասիական Թուրքիայում նրանց թիվը կազմում էր շուրջ 8 միլ[19], իսկ Արևմտյան Հայաստանում, ինչպես ասվեց այն չէր հասնում նույնիսկ մեկ միլիոնի:

Արևմտյան Հայաստանում թուրքերի մեծ մասը բնակվում էր գյուղերում և զբաղվում երկրագործությամբ ու անասնապահությամբ, իսկ վաքր մասը՝ քաղաքներում և զբաղվում պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծառայությամբ, մյուլթեզիմությամբ, վաճառականությամբ, արհեստներով, օրամշակությամբ և այլն: Երկրի որոշ քաղաքներում թուրքերը կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի մյուս ժողովուրդների, թուրքերն ազատ էին ազգային ու կրոնական հալածանքներից: Սակայն համիդյան դժնդակ պայմաններում նրանք ևս ոչ այն չավավ, ինչ քրդերը և մանավանդ հայերը ենթարկվում էին սոցիալական հարստահարումների ու կեղեքումների:

Աբդուլ Համիդի կառավարությունը համեմատաբար մեղմ քաղաքականություն էր վարում չերքեզների նկատմամբ: Մահմեդական այս զանգվածը թափանցեց Թուրքիա և Արևմտյան Հայաստան Ղրիմի պատերազմից հետո և մեծ քանակ կազմեց XIX դարի վերջին քառորդում: Կառավարության կողմից չերքեզները տեղավորվեցին Արևմտյան Հայաստանի Մանազկերտ, Բուլանըխ, Ախլաթ, Մուշ, Գենջ, Աղյջևազ գավառներում, ինչպես և Խարբերդի, Էրզրումի ու Արվազի վիլայեթների մի շարք շրջաններում: Ամենուրեք նրանք ցրված էին քրիստոնյա ու մահմեդական բնակչության մեջ, իսկ հաճախ էլ խցկված նրանց գյուղերում[20]: Չերքեզները զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ, աճեցնում էին հատկապես ընտիր ձիեր:

1890–ական թվականների հայկական կոտորածներից հետո թուրքական կառավարությունը չերքեզների նոր ներգաղթ կազմակերպեց դեպի Թուրքիա ու Արևմտյան Հայաստան: Կառավարության կողմից ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որ նստելով Թիֆլիսում, եկվորներին ուղարկում էր հայաշատ ու տնտեսապես դեռ կայուն գյուղեր, որ դրանց միջոցով կարողանան քանակապես նոսրացնել և նյութապես հյուծել բնակիչներին: Ականատեսը գրում էր. «Դիտմամբ կը փնարվին հայաշատ ու բարգավաճ գյուղեր հոն հաստատելու համար կովկասահայերու վրեժխնդրությամբ թունավորված թաթարները: Այլևս գաղտնի չէ, որ թուրք կառավարությունը՝ հայ գյուղերը իսլամ... տարրերու լցնելու քաղաքականությունը ամենեն հաջող քայլերեն միայն կը նկատե՝ զանոնք հայերեն պարպելու համար» [21]:

Համիդյան պաշտոնյաները տեղավորվում էին ներգաղթողներին նաև արևմտահայ ազգային ազատագրական պայքարի օջախներում, մասնավորապես Տարոնում, որ պատեհ առիթով օգտագործեն նրանց հայկական շարժումների դեմ, շահագրգռելով հայերի շարժական ու անշարժ ունեցվածքներով, գյուղերով ու հողերով: 1902 թ. «Դրոշակ» –ը գրում էր. «Մշո դաշտի գյուղերն են լեցված 3 հազարեն ավելի գաղթական չերքեզներ», որոնք «օր ավուր կը սպասեն Սասնոյ կոտորածին, որ երթան ու գրավեն Սասնոյ և Սիմ լեռնաշղթային գեղեցիկ լեռնաբնակ հայ գյուղերը. ինչպես ասոնցմե քանի մը հազար տուն, 6–10 տարի առաջ, եկան և բռնի քար ու քանդ ընելով Վարդոյի և Խանդերսի (Մշոյ դաշտի հյուսիսային լեռնաշղթան) լեռնաբնակ հայ գյուղերը, իրենք հաստատվեցան այն տեղերը» [22]: Բայց քանի դեռ չէր սկսված Սասունի կոտորածը, շարունակում էր թերթը, պաշտոնյաները հարկադրում էին հայ գյուղացիներին՝ հոգալ չերքեզների «ապրուստի բոլոր պիտույքները» [23]:

Շարունակելով չերքեզների ներգաղթը դեպի Թուրքիա, սուլթանի կառավարությունը գործակալներ էր ուղարկում Կովկաս, որոնք համոզում էին լեռնականներին՝ թողնել Ռուսաստանը: Եվ վերջիններս խաբվելով նրանց կեղծ խոստումներից ու դժգոհ լինելով ցարիզմի գաղութային քաղաքականությունից, լքում էին հարազատ՝ վայրերը, մեկնում Թուրքիա:

Ի տարբերություն նախորդ տարիների, երբ ռուսական կառավարող շրջանները քաղաքական ու ռազմական նկատառումներով, արգելակում էին լեռնականների արտագաղթը, 90–ական թվականների վերջերից, այլևս չէին խոչընդոտում նրանց: Այժմ ցարիզմը գտնում էր, որ լեռնականների արտագաղթով նախ՝ կստեղծի ազատ տարածություն, որը կտրամադրվի կայսրության կենտրոնական շրջաններից տեղահանվող գյուղացիներին, երկրորդ՝ կմաքրվի իր թիկունքը թշնամական տարրերից և ապագայում Թուրքիայի դեմ պատերազմելիս, կազատվի ավելորդ լարվածությունից: Ճիշտ է, ցարական շրջանները չէին անտեսում այն հանգամանքը, որ լեռնականները աեղավախվելով Թուրքիա, կդառնան իրենց կատաղի թշնամիները և այսպես թե այնպես օգտակար կլինեն հակառակորդին, բայց միաժամանակ գանում էին, որ թուրքական կողմում նրանք քիչ վտանգավոր կլինեն, քան սեփական թիկունքում:

Դարագլխին երկու բռնակալները՝ Համիդ II–ն ու Նիկոլայ II–ը Կովկասի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության տեղաբաշխման հարցում կարծես հասել էին վախադարձ ըմբռնման: Նրանցից մեկը իր երկրից արտամղում էր մահմեդականներին, իսկ մյուսը՝ քրիստոնյաներին, կոպիտ կերպով ոտնահարելով այդ ժողովուրդների ազգային շահերը: Ուշագրավ է, որ ռուսական կառավարող շրջանները, երբ տեսան, որ Թուրքիան հայերի արտագաղթը թույլատրում է նրանց ետ չվերա-

դառնալու պայմանով, իրենք էլ սկսեցին նույնը կատարել լեռնականների նկատմամբ: Կովկասի գլխավոր կառավարչապետ Գոլիցինի 1898 թ. փետրվարի 6-ի այն զեկուցագրին, թե երկրամասի մահմեդականներից 6000 ընտանիք դիմել են իրեն՝ Թուրքիա գաղթելու խնդրագրերով, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը պատասխանեց՝ թույլատրել՝ ետ չվերադառնալու պայմանով[24]:

Թուրքական կառավարության վարած քաղաքականության հետևանքով տասնյակ հազարավոր չերքեզներ արտագաղթեցին Ռուսաստանից դեպի Օսմանյան կայսրություն: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայկական վեց վիլայեթներում նրանց թիվը արդեն հասնում էր 62. 000-ի[25]:

Չենթարկելով կրոնական հալածանքների, տուլթանական իշխանությունները սակայն օգտագործում էին չերքեզների դավանանքը և աշխատում էին թուրքացնել նրանց: Այդ պատճառով էլ չերքեզների համար նրանք չէին բացում դպրոցներ և կուլտուր-լուսավորական այլ հաստատություններ, աշխատում էին որքան հնարավոր է հեռու պահել գիր ու գրականությունից, ժամանակի քաղաքակրթությունից: Զինելով չերքեզներին, թուրքական պաշտոնյաները օգտագործում էին նրանց հայերի, մասամբ նաև քրդերի դեմ և այդպիսով ավելի էին բորբոքում ազգամիջյան թշնամությունը:

Սուլթանի կառավարությունը, ի թիվս քրիստոնյա այլ ժողովուրդների, հետապնդում ու հալածում էր նաև հույներին. արգելակում էր նրանց լեզվի ու կուլտուրայի զարգացմանը, անարգում էր ուղղափառ հավատը, պղծում սրբությունները: Չդիմանալով այդ բռնություններին, հույների որոշ մասը՝ մոտ 15. 000 մարդ թողեց պապենական քրիստոնեությունը և ընդունեց մահմեդականություն[26]: Սակայն հույների մեծամասնությունը դիմագրավեց համիդյան սարսափներին ե պահպանեց իր լեզուն ու դավանանքը: Պ. Ի. Ավերյանովը նշում էր, որ 1911-1912 թթ. ամբողջ Թուրքիայում ապրում էր շուրջ 1, 5 միլիոն հույն[27], իսկ պատրիարքարանը ցույց էր տալիս, որ հայկական վիլայեթներում նրանց թիվը կազմում էր 42. 000 մարդ[28]: Հույներն ապրում էին գերազանցապես Էրզրումի և Սվազի վիլայեթներում և զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, հանքամշակությամբ, իսկ որոշ տեղերում նաև արհեստով ու ստևտրով:

Սուլթանական կառավարությունը ազգային հալածանքների էր ենթարկում Արևմտյան Հայաստանի նաև մյուս ժողովուրդներին՝ պարսիկներին (13. 000 մարդ), լազերին (10. 000 մարդ), գնչուներին (3. 000 մարդ), հրեաներին և այլոց[29]:

Պարսիկները ապրում էին գերազանցապես Վասպուրականում և մասամբ Տարոնում ու Բարձր Հայքում, զբաղվում էին առավելապես երկ-

բագործությամբ, ինչպես նաև արհեստներով ու առևտրով, լազերը բնակվում էին հիմնականում Տրապիզոնի ու մասամբ Էրզրումի վիլայեթներում: Նրանք երբեմնի վրացիներ էին, բայց պատմական հանգամանքների բերումով մահմեդականացել էին, թուրքացել, զբաղվում էին մեծ մասամբ երկրագործությամբ: Հրեաները ապրում էին Վանի վիլայեթի Բաշկալե ու Գեավաշ շրջաններում, ինչպես և Արևմտյան Հայաստանի որոշ քաղաքներում[30]: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով, առևտրով ու վաշխառությամբ: Ականատեսներից մեկը գրում էր, թե հրեա առևտրականները Վասպուրականի որոշ շրջաններ բաժանել են իրար մեջ և պարտավորվել են չանցնել միմյանց սահման: Նրանք «ամեն առևտրի մեջ անարգել մուտք են գործում, կան այնպիսիներ, որ ամեն գործ կատարում են»[31]:

Այդպիսով, թուրքական բռնապետությունը Արևմտյան Հայաստանի ժողովուրդներին, հատկապես ոչ թուրքերին սոցիալական հարստահարման հետ մեկտեղ ենթարկում էր նաև ազգային ու կրոնական հալածանքների, սերմանում էր նրանց մեջ ազգամիջյան թշնամություն, որ կարողանա հեշտությամբ ճնշել ազատագրական ելույթները, վարում էր ուծացման քաղաքականություն, աշխատում էր պահել խավարի ու տգիտության մեջ, խոչընդոտելով նրանց նաև հոգևոր առաջընթացին: Սուլթանի կառավարությունը դաժան քաղաքականություն էր վարում հատկապես հայերի նկատմամբ, դատապարտելով նրանց ֆիզիկական բնաջնջման:

Շնորհիվ նրա այդ քաղաքականության Արևմտյան Հայաստանում XX դ. սկզբին նկատելի արագությամբ մեծացավ մահմեդականների, մասնավորապես թուրքերի թիվը, իսկ հայերինն, ընդհակառակը, նվազեց[32], զգալիորեն սրվեցին ժողովուրդների միջև եղած հակասությունները, պահպանվեցին նրանց սոցիալ–տնտեսական և կուլտուրական տարբերությունները[33], կաշկանդվեց երևոի զարգացումը, շարունակելով մնալ գերազանցապես գյուղացիական[34]: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ ամենը բացասաբար էին ազդելու Արևմտյան Հայաստանի ժողովուրդների ազատագրական շարժումների վրա:

AZAT HAMBARYAN

THE NATIONAL POLITICS OF SULTAN GOVERNMENT TOWARD MUSLIM POPULATION OF WESTERN ARMENIA (1898–1908)

Based on unpublished archival materials and other primary sources, author considers some peculiarities of politics of Ottoman sultan Abdul Hamid II toward the Muslim population of Western Armenia, namely Kurds, Turks, North Caucasians. The Muslims of Ottoman Empire were regarded by the bloody tyrant as the basis of

regime and as allies in the struggle against Armenian national–liberation movement. Author concludes that this politics of oppressive Turkish govemment was aimed to increase the percentage of Muslim population, in particular Turks, regarding the Armenians.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», գ. 1584, թթ. 32–34:
2. Տես «Մուրճ», 1904, No 4, էջ 25–26, Ս. Հայկունի, Բազրևանդ, Ջրաբաշխ գավառ, մ. Ա, Էջմիածին, 1894, No 105–106, 125, 149, 270, 304, «Մշակ», 1907, No 134:
3. Ф. Грязнов, Военный обзор передового театра в Азиатской Турции, ч. II, СПб, 1897, стр. 55–56.
4. Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 72:
5. П. И. Аверьянов, Этнографический и военно–политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб, 1912, стр. 13.
6. Նույն տեղամ:
7. Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թթ. 12–13:
8. Ա–Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912 թ.:
9. Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 118, թ. 183:
10. Տես Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909, էջ 28:
11. Արևմտյան Հայաստանի քրդերը չունեին միասնական կրոն: Նրանց ճնշող մեծամասնությունը մահմեդականներ էին, ստորաբաժանվելով սուննի և շիա ուղղությունների, իսկ մյուս մասն էլ՝ ղզզլբաշներ և եզդիներ էին: Ըստ Պ. Ի. Ավիդյանովի տեղեկությունների, 1911 թ. Արևելյան Թուրքիայում բնակվող 1. 740. 000 քրդերից 1. 475. 000–ը համարվում էին սուննիներ, 200. 000 ղզզլբաշներ, 40. 000 եզդիներ, իսկ 25. 000–ը՝ շիաներ (տես նրա նշված աշխատությունը, էջ 13): Ի տարբերություն սուննիների ու շիաների, որոնք ապրում էին երկրի համարյա բոլոր շրջաններում, ղզզլբաշները ապրում էին գերազանցապես Դերսիմում, իսկ եզդիները՝ Վանի ու Դիարբեքիրի վիլայեթներում, ինչպես և մասամբ Բիթլիսի վիլայեթում, Ալաշկերտի ու Բայազետի գավառներում:
12. Հայտնի է, որ սուննիզմը իբրև մահմեդականության հիմնական ուղղություն առաջացել է VII–VIII դդ. և ավարտվել IX դ.: Նրա կողմնակիցները դուրանի հետ միասին ճանաչում էին նաև սուննի (այսինքն Մուհամեդի ճառերը կամ նրա մասին եղած պատմվածքները պարունակող գրքերի) սրբությունը: Իսկ շիիզմը իբրև մահմեդականության երկրորդ ուղղություն, առաջանալով նույնպես VII–VIII դդ., պահանջում էր, որ Մուհամեդից հետո առաջին խալիֆը պետք է համարել Ալիին՝ Մուհամեդի հորեղբորորդուն և փեսային: Այդ ուղղության կողմնակիցները գտնում էին, որ սուննիների մարգարեները՝ Աբու Բեքիրը, Օմարը և Օսմանը եղել են սոսկ բռնատիրողներ: Մահմեդականության այս երկու ուղղությունների կողմնակիցները կրոնական քողի տակ վարում էին իրար դեմ քաղաքական պայքար, որն օգտագործվում էր հարստահարող վերնախավի կողմից:

13. Ղզզլբաշությունը (թուրքերեն նշանակում է կարմիր գլուխ, ի պատիվ իրենց 12 շիայական իմամների նրանք կրում էին այնպիսի գլխակապ, որն ունենար 12 ծիրանագույն գոլեր) հանդիսանում էր շիիզմի այլատեսականությունը, նրա գլխավոր հենարանը: Պայքարելով սուննիների դեմ, ղզզլբաշները հաճախ դաշնակցում էին քրիստոնյաների հետ և դրա համար վերջիններիս նկատմամբ չէին լցված այնպիսի ատելությամբ, ինչպես սուննիները: Ղզզլբաշների մի մասը մահմեդականացած քրիստոնյաներ, ավելի ճիշտ՝ հայեր էին և շարունակում էին պաշտել նաև պապենական դավանանքը: Այդ հանգամանքը նույնպես մերձեցնում էր ղզզլբաշներին քրիստոնյաների հետ: 1911 թ. սեպտեմբերին Վանի անգլիական փոխհյուպատոս կապիտան Սիլը գրում էր, որ ղզզլբաշները «քրիստոնեությունը համարում են իրենց հավատին մոտ, սիրում են քրիստոնյաներին և հատկապես ատում թուրքերին» (ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ցուց. 482, գ. 719, թ. 118): Համարյա նույն բանն էր հաստատում նաև Սյուրմենյանը, որը 1947 թ. հրատարակած իր հուշերում նշում էր, որ Երզնկայի սանջակում ղզզլբաշները պաշտում էին Ալիին ու Քրիստոսին, գնում էին ուխտի թե իրենց էրքենաները (տները) և թե քրիստոնյաների վանքերը: Նրանք հայերի հետ միասին ե հայերի պես տոնում էին Վարդավառը, Կաղանդը, Զատիկը և այլն (Սյուրմենյան, Երզնկա, Գահիրե, 1947, էջ 200):

14. Եզդիների կրոնը իր մեջ պարունակում էր հեթանոսական բազմաթիվ տարրեր: Ռաֆֆին նրանց բնութագրում էր իբրև «մարական ցեղի սկզբնական տիպը, մնացած իր մոգական սովորություններով» (տես նրա Երկեր, հ. 4, էջ 408): Իսկ Ս. Ա. Եղիազարյանը, խոսելով եզդիների կրոնի մասին, ենթադրում էր, որ այն եղել է ինքնատիպ: Բայց որովհետև գրի չի առնվել, այլ ավանդվել է սերունդից սերունդ, ուստի դարերի ընթացքում աղավաղվել է կամ ենթարկվել հարևան ժողովուրդների հավատալիքների ազդեցություններին: Հենց դրանով է նա բացատրում այն փաստը, որ եզդիների կրոնում կան ինչպես զրադաշտական, այնպես էլ քրիստոնեության ու մահմեդականության տարրեր: Եզդիները պաշտում էին հրեշտակ Սեյիկ Թաուզին, որին պատկերում էին սիրամարգի տեսքով (ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912, ցուց. 482, գ. 719, թթ. 182–186): Նրանք պաշտում էին նաև քրդական դիցաբանության մեջ «աստվածային առանձնահատկություններով օժտված» իրենց նախահորը՝ Եզդանին, որը իբր թե նախապես թագավորել է երկրի վրա, իսկ հետո բարձրացել երկինք: Եզդիները գտնում էին, որ հանդերձյալ աշխարհում իրենց հոգիները պետք է անբաժան լինեն Եզդու կամ սուլթան Եզդու հոգուց, իսկ դրա համար պարտավոր են վառ պահել նրա հիշատակը (Ամինե Ավդալ, Անդրկովկասի քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 87):

15. Կային քրդական նաև ուրիշ զանգվածներ, որոնք կանգնած էին տակավին տոտեմիզմի մակարդակի վրա: Նրանց կարծիքով իրենց հարազատների հոգիները բացի երկինք բարձրանալուց կամ գետնի մեջ մտնելուց կարող էին տեղափոխվել նաև բույսերի ու կենդանիների մեջ, փրկել նրանց բնության արհավիրքներից, անձնական փորձանքներից ու դժբախտություններից, հեռու պահել չարքերից: 1879 թ. «Մշակ» –ի

թղթակիցը հաղորդում էր, որ Դերսիմում «շատերուն մեջ կով մը, ոչխար մը, գառ մը, ձի մը կապած կը սնուցանեն՝ երբեք չը բանցնելով, և իրենց մեռած հայրը, եղբայրը, որդին է կըսեն, զոր իբր թե իրենք կը ճանչնան, որ մեռնելեն վերջը հոգին անոնց կացեր է: Սեիտ մը այսպես պահած ձիուն վիզը կը շփեր և երբ ձին իրեն կը քսվեր ու կը խաղար. ահավասիկ տեսա՞ր, կըսեր ինձի, որ եղբայրս զիս կը ճանչե» («Մշակ», 1879, No 41):

16. ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1901, գ. 1587, թ. 23, ֆ. «Քաղաքխիվ», 1901, ցուց. 482, գ. 711, թ. 10:
17. «Մշակ», 1895, No 100:
18. Տես «Դրոշակ», 1900, No 10, էջ 145–146:
19. Տես Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թթ. 12–13:
20. Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 10:
21. Տես Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 118, թ. 183, Ա–Դ.ո, նշված աշխատությունը, էջ 168, 186, 193, 218:
22. Տես Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, էջ 24:
23. Տես Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 8:
24. Տես Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1087, գ. 585, թ. 1, Ֆ. Թեյլոր, Путешествие по Армении, Курдистану и Верхней Мессопотамии в 1866 г., Тифлис, 1873, стр. 65. «Դրոշակ», 1902, No 8, էջ 121, Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 20–22, «Ազատամարտ», 1909, No 19:
25. «Դրոշակ», 1906, No 11, էջ 166, տես նաև 1907, No 4, էջ 63:
26. «Դրոշակ», 1902, No 8, էջ 121:
27. «Դրոշակ», 1903, No 2, էջ 25:
28. Տես ՌԱՔԱ, ֆ. «Թուրքական սեղան (նոր)», գ. 2419, թ. 5:
29. Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թթ. 12–13:
30. Տես Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 16:
31. Տես Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թթ. 12–13:
32. Տես Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 16:
33. Տես Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թթ. 12–13:
34. Տես Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1087, գ. 585, թ. 19:
35. «Աշխատանք», 1912, No 28–75, էջ 7:
36. Ուշագրավ է, որ երկրի մի շարք շրջաններում գյուղերի հայկական անունները, պահպանվեցին՝ նույնիսկ այն բանից հետո, երբ նրանցում արտամղված հայերի փոխարեն հաստատվեցին թուրքեր և այլ մահմեդականներ: Որոշ տեղերում նորեկները փոխեցին հայկական գյուղերի վերջին վանկերը, հարմարեցնելով դրանք իրենց արտասանությանը (տես «Դրոշակ», 1903, No 6, էջ 84):
37. Չնայած կառավարության կողմից կիրառվող դաժան հետապնդումներին արևմտահայերը, շարունակելով պահպանել ու հնարավորության սայմաններում առաջ մղել իրենց ազգային արժեքները, հոգևոր կուլտուրան, նաև XX դ. սկզբին գտնվում էին հասարակական համեմատաբար բարձր մակարդակի վրա և ավելի կարևոր դեր էին խաղում երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման գործում, քան իրենց հարևանները: Լինչը նշում էր, որ հայերի «առաջադիմությունը որոշում է ամբողջ երկրի առաջադիմությունը, իսկ արտագաղթը երևան է

բերում երկրի անկում» (Линч, Армения, Тифлис, 1970, т. II, стр. 548): Հայերը ազդում ու ներգործում էին հասարակական դեռ ցածր մակարդակի վրա կանգնած մահմեդականների վրա: Դրա հետևանքով Բարձր Հայքում, Տարոնում, Վասպուրականում ու Փոքր Հայքում թուրքերն ու քրդերը աշխատում էին ընդօրինակել հայերի կենցաղը, իսկ որոշ տեղերում նույնիսկ խոսում ու աղոթում էին հայերեն: Սալխասը նշում էր, որ Վանում «թուրքերեն շատերը, մասնավորաբար խառն թաղերու բնակիչներեն մանր խանութպանները, ոստիկաններեն ոմանք հայերեն կը խոսեին, այնքան որ զորավոր էր հայերենի ազդեցությունը քաղաքին մեջ: Հազվադեպ չէին այն պարագաները, երբ ուրախության ժամանակ թուրքերը հայկական երգեր կը երգեին» (Մալխաս, Ճամբուս վրա, հ. Ա, էջ 94–95): 1909 թ. Ա–Դոն գրում էր. «Տաճիկ ժողովուրդը թե տեմպերամենտով և թե կենցաղով անհամեմատ բարձր է կանգնած մահմեդական մյուս տարրերից, մասնավորապես քրդերից, բայց որպես տիրող տարր, որը կոչված է իբր առաջ մղելու երկիրը, մտավորապես և տնտեսապես շատ ետ մնացած է և կուլտուրապես անհամեմատ ավելի ստոր աստիճանի վրա կանգնած, քան հայ ժողովուրդը, չնայած քաղաքական և սոցիալական այն ծանր պայմաններին, որի մեջ գտնվում էր վերջինս: Շնորհիվ այդ ետամնացության, տաճիկ ժողովուրդը... հաճախ եղել է գործակից այն վայրագությունների, որ տեղի են ունեցել մահմեդական մյուս տարրերի կողմից» (Ա–Դո, նշված աշխատությունը, էջ 250):

38. Արևմտյան Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը ապրում էր փոքր գյուղերով: Դեռ 80–ական թվականներին ամեն մի հայ գյուղ միջին հաշվով ուներ՝ Բալուում՝ 33, 1 տնտեսություն, Քրդիում՝ 26, 2, Չարսանջակում՝ 24, 0, Մուշում՝ 34, 3, Բասենում՝ 27, 7, Խնուսում՝ 17, 7, Վարդոյում՝ 21, 6, Խարբերդում՝ 40, 9 տնտեսություն և այլն: (տես А. М. Колюбакин, Материалы для военно—статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1821, т. III, ч. I, отд. 2—ой, стр. 313). Անշուշտ, կային գյուղեր, որոնց ունեցած տնտեսությունների քանակը անցնում էր 400–500–ից, բայց դրանց թիվը փոքր էր: Էլ ավելի փոքր էին քրդական ու ասորական գյուղերը: Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանց մասին չունենք տեղեկություններ: Օգտվելով գյուղերի սակավամարդությունից, իշխանություններն ու աղաները հեշտությամբ ճնշում էին նրանց բնակիչների ելույթները: Ուստի գյուղերի սակավամարդությունը նույնպես ուներ բացասական նշանակություն ազատագրական շարժումների համար: